




ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԻԹ. ՑԱՐԻ 1915

Տարեկան 15 ֆր. ոսկի — 6 ռբ.:
 Վեցամսեայ՝ 8 ֆր. ոսկի — 3 ռբ.:
 Մեկ թիւ կարժե 1-50 ֆր. — 70 կ.:

ԹԻԻ 1-12
 ՅՈՒՆՈՒԱՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ



Հ. Վ. Վ. ՄԱՏԻԿԵԱՆ ԵՒ Հ. Թ. ԿԵՏԻԿԵԱՆ



Քաւոր էինք արդէն հայկական ներկայ ճգնաժամին պատճառաւ. արտերնիս ճնշուած եւ մտածկոտ՝ կը սպասէինք պատերազմի ելքին, որպէս զի մեր տառապեալ ազգին գէթ մագորդները ազատէին ընաջնջումէ. եւ անա յանկարծ Կարնէն հեռագիրը կը գումէ՝ Հ. Կետիկեան մեռած, Հ. Մատիկեան հիւանդ. եւ այն ալ չորս օր վերջը (Մայ. 17ին 1915) կը վախճանի: — Սրտի անհուն ցաւով է, որ կը ծանուցանէ Խմբագրութիւնս Վիեննական Մխիթարեան Միաբանութեան այս անդար-մանելի կորուստները: Պատերազմը իւր աշխարհաւոր զէնքերով մտաւ նաեւ մեր սեամբէն ներս. ժառանգաւոր՝ պատերազմի այս անբաժին ընկերը, իւնց, փրցուց մեր միջավայրէն կեանքեր, որոնց՝ ամէնէն աւելի այժմ՝ պէտք ունէր Միաբանութիւնս.

Հանգուցեալներուն մահուան անդրագոյն պարագաները մեզի տակաւին անծա-նօթ են դժբախտաբար, անոր համար ստիպուած ենք հոս պարզ կենսագրական-ներով քաւականանալ: — Հ. Վահան Վ. Մատիկեան ծնած է 1868 (Մյո. 7)ին Խոտորչիոյ Կրման գիւղը: Մկրտութեան անունն էր Համբարձում. տեղացիները Խոտորչիոյ Կրման գիւղը: Համբարձում Աջդեան, վասն զի իւր հայրը՝ Սար-գիւնը կ'անուանէին նաեւ

գիս¹ երեւելի աշըղ մըն էր, ինչպէս է այժմ՝ նաեւ իւր կրտսեր եղբայրը՝ Մեղքոն Մատիկեան։ Դպրոցական առաջին կրթութիւնը կ'առնու տեղական դպրոցը. տարիներ վերջը՝ հայրը արդէն մեռած ըլլալով՝ երէց եղբայրը՝ Բաղդասար զինքը Կարին կը տանի, ուսկից ներքին կոչումէ մը ղրդեալ 1884ին Մայր-վանքս կու գայ։ Ուխտադրութիւնը կ'ընէ 1888ին եւ տակաւին քահանայութեան կարգը (1891ին) չընդունած՝ Միաբանութեանս Կղերանոցին Բ. Վերակացու կը կարգուի, եւ ութ տարի նոյն ծանր պաշտօնին մէջ կը մնայ։ Այս ժամանակամիջոցին կատարած է նաեւ Հանդիսի Հրատարակչի պաշտօնը իբրեւ օգնական Հ. Տաշեանի, որ՝ ինչպէս յայտնի է, 1891—1895 Խմբագրապետ էր Հանդիսի։ Հ. Վ. Մատիկեան զրական մարդ չէր. անոր համար ալ ժամանակին գիտնական մեծամեծ վէճերն ու գիւտերը զինքը այնչափ չէին հետաքրքրեր. իւր հոգին կեանքի աւելի առօրեայ եւ գործնական հարցերու ուղղուած էր եւ անոնց մէջ գտաւ իւր յագուրդը։ Մեր ըսածներուն վկայ է իւր ամբողջ կեանքը, քայց մանաւանդ Հանդիսի 29 տարիներու հատորներն, որոնց մէջ հազիւ քանի մը անգամ կը հանդիսանայ Հանգուցելոյն անուան։ Գրած է երկու քանաստեղծութիւն՝ «Աշուն», (ՀԱ. 1894,



Հ. Վ. Վ. ՄԱՏԻԿԵԱՆ

էջ 92) եւ «Մխիթարութիւն գիշերուան», (ՀԱ. 1895, էջ 323) եւ յօդուած մըն ալ «Օճի թոյնի վրայ», 1896, էջ 180. Իրմէ, որ հմուտ մըն էր քննադատմական իրած մէջ, կը մտայ անտիպ ընդարձակ աշխատութիւն մը՝ «Բնական Պատմութիւն», զոր պարագաներու ընթացքը դժբախտաբար կարելի չէ եղած հրատարակել։

1897ին թոքատալ մը զինքը մատալի քիչ մը աւելի կազդուրուելու համար, նոյն տարին իսկ ծանապահօրդու-


համերձ վիճակի կը մատնէ, ուսկից սակայն ծարտար բժշկի մը ձեռքով կ'ազատի. քիչ մը աւելի կազդուրուելու համար, նոյն տարին իսկ ծանապահօրդու-թիւն մը կ'ընէ ղէպի Կաւկաս, ուր 3—4 ամիս կենալէն վերջը՝ կը վերադառնայ Մայր-վանքս եւ կ'առաքուի 1899ին Այտըն, ուսկից կ'իջնայ Զմիւռնիա իբրեւ վերատեսուչ Միաբանութեանս դպրոցին։ Հոն Հանգուցելոյն վերատեսուչութեան տակ ուսանելու քարեքախտութիւնը ունեցած է նաեւ ստորագրողս. Հանգուցելոյն ինծի (իբնէ մէկ ազգականին) հանդէպ ցոյց տուած քանի մը խիստ վերաբեր-մունքները շատ անհասկընալի կը թուէին ինծի նոյն ատեն. տարիներ վերջը հասու եղայ անոնց նշանակութեան եւ իմացայ միանգամայն թէ ինչպիսի մեծ հոգի մը կը կրէր այն իր համեմատաբար շատ տկարակազմ մարմնոյն մէջ։ — 1906էն ի վեր զինքը կը գտնենք Պոլիս մինչեւ 1909, յորում Մեծաւորի պաշտօնով կ'երթայ Այտըն. երեք տարի վերջ ալ նոյն պաշտօնով Հ. Թ. Կէտիկեանի հետ կ'առա-

¹ Հմմտ. Հ. Մ. Համեան, Երգեր, պոեմներ եւն խոտորներ, էջ 88-90, ուր անոր տաղերէն երկու նմիշ հրատարակուած են։



քուի Կարին, հոն նոր Վանատուն մը եւ Դպրոց մը քանալու նպատակաւ: Յանձնուածը դիւրին գործք մը չէր. սակայն Հ. Վ. Մատիկեանի անխոնջ եռանդը քիչ ատենէն կը հարթէ ամէն դժուարութիւն, Դպրոցը կը քանայ եւ նոյն տարին արդէն (1913ին) 130 աշակերտներով դասերու կը սկսին Մխիթարեան Հայրերը: Բայց աւա՜ղ, աստուածային Նախահինամութիւնը այլազգ տրամադրած էր...: Տարւոյս (1915) Ապրիլ եւ Մայիս ամիսներուն ժանտատենդի համաճարակ մը սարսափելի ակերներ կը գործէ Կարնոյ մէջ, կը վարակուին նաեւ Հ. Թովմաս եւ Հ. Վահան, եւ հակառակ իրենց կրօնակիցներուն սիրալիր ջանքերուն՝ անկարելի կ'ըլլայ զիրենք մահուան ծիրաններէն ազատել:

Վահան Կէտիկեան, այսպէս կը կոչուէր յառաջ Հ. Թովմաս, ծնած է 1876 Սեպտ. 13ին նոյնպէս Խոտորջրոյ Կրման գիւղը: Հօրը անունն էր Գասպար, մօրը՝ Մարիամ, որ Հ. Վ. Մատիկեանի հարստատ քոյրն էր: Տակաւին մանուկ եւ քայլերը դողդոջուն՝ կը կորսնցընէ իւր սիրելի մայրը, եւ իրեն հետ նաեւ երեք անչափահասներ՝ Գրիգոր, Յակովբ եւ Արսէն, կը մատնուին ցաւալի դրութեան: Բիւզ մը վերջը սակայն կը ստանան երկրորդ



Հ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

մայր մը, որ իսկական մօր մը գուրգուրանօք կը խնամէ զիրենք: Վահան մինչեւ իր 16 տարեկան հասակը կը մնայ Կրման, ուր վերջին տարիները մինչեւ իսկ հսկողութեան պաշտօն կը վարէր դպրոցին մէջ, եւ 1893ին, այսինքն՝ գիւղին Ամենասուրբ Երրորդութեան նոր եկեղեցւոյն շինութեան տարին, Տ. Յակովբ Վ. Մեկիքեանէ կ'առաքուի Կարին, ուսկից նոյն տարին

իսկ կը հասնի Մայր-Վանքս: 1894ին նորընծայութեամբ Միաքանութեանս զգեստը կ'առնու, եւ 1895 Հոկտ. 6ին ուխտիւ նոյնին անդամ՝ կ'ըլլայ: Իւր դպրոցական շրջանը յաջողութեամբ աւարտելէն վերջը՝ 1900 Դեկտ. 23ին կը ձեռնադրուի քահանայ եւ յաջորդ տարին արդէն կը կարգուի խմբագրապետ Հանդես Ամսօրեայի: Այս պաշտօնին մէջ կը մնայ մինչեւ 1906 Օգոստ., երբ Խմբագրութիւնը յանձնելով Հ. Հ. Համբարեանի ինքը դասատուութեան պաշտօնով կը մեկնի Կ. Պոլիս, ուսկից 1913ին Միաքանութեանս Վարչութիւնէն կ'առաքուի Կարին իբրեւ օգնական Հ. Վ. Մատիկեանի:

Հ. Կէտիկեան քարեխառն բնութեամբ, վայելչակազմ՝ մարմնով համակրելի անձնատրութիւն մըն էր: Քաջ հմուտ էր մանաւանդ աշխարհաբար հայերէն լեզուին, որուն առանձնայատուկ օրէնքներն ու ասութիւնները տարիներով ուսումնասիրած էր: — Իր 14. ամեայ արդիւնաւոր գործունէութեան մէջ առաջին տեղը կը զբաւեն իր Խմբագրապետութեան տարիները: Ստոյգ է, Հ. Կէտիկեան մասնագիտական մեծամեծ ուսումնասիրութիւններ չընծայեց իր ընթերցող հասարա-

կուլթեան. իր անճնական գրութիւնները միծաւ մասամբ «Ծաղկեփունջ», եր եւ, իսկ միւս յօդուածներն ալ աւելի առթական ընոյթ կը կրեն իրենց վրայ, ի քաց առնելով ի հարկէ իր թարգմանութիւնները, որոնք իսկապէս ծանր աշխատութիւններ են (հմմտ. Պեդեքուրն Հ., Հայերէն եւ Դրացի լեզուները, Ազգ. Մտն. ԺԲ, էջ ԺԱ + 257, Մարկոսարտ Յ., Հայ Բռնաշխը, Ազգ. Մտն. ԽԳ, էջ 39): Սակայն Խմբագրապետէ մը այլազգ ալ չէր պահանջուէր. Հ. Կէտիկեանի արժանիքն յայնմ է, որ զիտցաւ Հանդէս Ամսօրեայի իւր գաղափարականին մերձեցնել, անոր կողման սահմաններն աւելի ամփոփելով նիւթերու եւ յօդուածներու որոշ ընտրութեամբ մը. զիտցաւ նա մանաւանդ զայն սիրցնել իր գեղեցիկ «Ծաղկեփունջ», երով, որոնց համագումարը արդէն մեծ հատոր մը կը կազմէ եւ անոր շուրջը ըլլորել թէ ազգային եւ թէ մանաւանդ եւրոպացի ականաւոր գիտնականներ: Նա կը հոգար Հանդիսի ոչ միայն ներկան, այլ եւ ապագան, յորդորելով, քաջալերելով մանաւանդ Միաբանութեանս երիտասարդ ուժերը. վասն զի լաւ համոզուած էր որ ինչպէս Միաբանութեանս քարգաւառումն ու յառաջադիմութիւնը, նոյնպէս Հանդիսի ապագան երիտասարդ ուժերու լաւ պատրաստութենէն կախուած է յատկապէս: Հ. Կէտիկեան անվերապահ սիրով կը սիրէր իւր Ազգն ու Միաբանութիւնը. ընականաբար նուազ հոգատարութեան չէր կրնար ենթարկուիլ իր կողմանէ այն Միաբանութեան թերթը, որուն նպատակն էր եւ է իսկ իր սիրելի Ազգին փառաւոր՝ քայց եւ արիւնալիւր անցեալը ըննադատութեան ըովէն անցնել զայն իր մշմարիտ եւ անխարդախ գծերով գիտնական աշխարհի ընծայելու համար:

Հանգուցելոյն ոճն էր պարզ, անսեթեւեթ, քայց ուժգին եւ երբեմն նաեւ պատկերաւոր: Զարմանալի սրամտութիւն մ'ունէր հակառակորդին տեսութեան տկար կողմերը մատնանիշ ընելու մէջ. անոր համար զինքը ճանչնալ ուզողը կարդալու է աւելի իրեն ընդդիմադրութիւնները: Գաղափարներու տեղատարափ մըն է, որ դուրս կը ժայթքէ իր գրչէն, տեղատարափ մը սակայն ոչ թէ տրամաբանական համեմուած: Հ. Կէտիկեան ձարտաւառ մըն էր. այն ինք զինքը իբրեւ այսպիսի ցուցուց ամէնէն աւելի եկեղեցական ամպլիոններու վրայէն թէ Պոլսոյ մէջ եւ թէ Հայաստանի այն կողմերը, ուր որ իր ծայնը լսեցնելու առիթ ունեցած էր: — Խոստմնալից էր ապագան, քայց մահկանացութեան անողոր իրականութիւնը աւելի զօրաւոր դուրս եկաւ: Այժմ կը հանգչի այն իւր Մօրեղբոր հետ Կարնոյ Հայ-կաթողիկէից Եկեղեցւոյ մէջ. ափ մը հող միայն զիրենք կը քաժնէ այն դժբախտ հայաքաղքէն, որուն մէջ այսօր այլ եւս հայ չկայ:

Հ. Ա. ՄԱՏԻԿԵԱՆ

